

Études de linguistique et de philologie arméniennes. I. Recherches sur la syntaxe comparée de l'arménien, suivies De la composition en arménien, par A. MEILLET.

Ա. ՄԵՅՅԵ. Հայ լեզվաբանական և լատինական ուսումնասիրություններ, I. Հետազոտություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ և հայերենի բառարարչման մասին, է. Բենվենիստի նախաբանով: Հայկական մատենաշար Փալատա Այուլսկայան հիմնարկության, Լիսաբոն, 1962, III, 184 էջ:

Մեծ հայագետ, աշխարհահռչակ լեզվաբան Անտուան Մեյլեն (1868—1936), պատմա-համեմատական լեզվաբանության կարկառուն դեմքերից մեկը, հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությանը նվիրել է 24 աշխատություն և ավելի քան 540 հոդված: Այդ մենագրություններից երկուսում և հոդվածների դրեթե մեկ հինդերորդ մասում Հ. Աճառյանի ուսուցիչը պատմա-համեմատական մեթոդով համակողմանիորեն ուսումնասիրել է հին հայերենի հնչյունաբանությունը, բառադանձը (բառարարում, փոխառություններ, ստուգաբանություններ), ձևաբանությունը և շարահյուսությունը. նա ունի նաև հնդեվրոպական լեզվաբանությանը հայերենի դիրքը որոշող, ֆրանսիական հայագիտության նվաճումները հանրագումարող, ինչպես նաև հայ բարբառագիտական, բանասիրական և հայոց պատմության որոշ դրվագներ լուսարանող բազմաթիվ հոդվածներ: Բացի այդ, նա իր ջերմ ու ճիշտ կողմնորոշող գրախոսություններով գիտական հասարակությանը ներկայացրել է հայագիտական տասնյակ աշխատություններ: Հայագիտական կամ հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ նա նամակակցել է ականավոր շատ գիտնականների հետ՝ Հ. Աճառյան, Ս. Վ. Ամատունի, Մ. Արեղյան, Կ. Բասմաջյան, Խ. Իոհաննիսյանց (Քուչուկ), Մ. Վ. Մաքսուդյանց, Լ. Մսերյանց, Ի. Տեր-Մկրտչյան (Միսրան), Ա. Չոպանյան, Պողոս Նուպար Փաշա և ուրիշներ:

Դասական հայերենի իր երկու հայտնի քերականական ձեռնարկներից բացի, այս հսկայական հայագիտական վաստակը ցրված է ոչ բոլորին մատչելի մամուլում, և լեզվաբանական գիտությամբ դրադվողները միշտ էլ ցանկություն են հայտնել, որ այն ամփոփվի հատորներում և դառնա սեղանի գիրք: Նվաճա հրապարակի վրա է Մեյլենի հայագիտական հետազոտությունների առաջին հատորը, որ լույս է տեսել Մեյլենի արժանավոր աշակերտ, ֆրանսիացի հռչակավոր լեզվաբան էմիլ Բենվենիստի ջանքերով ու գլխավորությամբ և փարիզարենակ բանասեր Հայկ Պերոբերյանի անձնվեր աշ-

խատակցությամբ: Հատորի նախաբանից իմանում ենք, որ սրան պետք է հաջորդի «Հայ լեզվաբանական և բանասիրական ուսումնասիրություններ» երկրորդ հատորը, որ պետք է ընդգրկի Մեյլենի այն հոդվածները, որոնք նվիրված են հայերենի հնչյունաբանությանը, ձևաբանությանը և ստուգաբանությանը:

Խոսենք լույս տեսած այս հատորի մասին, որի հրատարակությունը կատարվել է անաստատիկ եղանակով (ֆոտոնմանահանությամբ) և բովանդակում է Մեյլենի վեց ընդարձակ հոդված:

Հատորը բացվում է պրոֆ. է. Բենվենիստի նախաբանով և մատենագիտական ծանոթությամբ: Առաջինում համառոտ տեղեկություններ են տրվում մեծ հայագետի մասին, ընդգծվում է նրա հայագիտական աշխատությունների թարմությունը՝ անկախ անցած ժամանակից և լույս տեսած նորագույն աշխատություններից, ինչպես Հ. Յենսենի «Հին հայերենի Բերականությունը» (1959): Մատենագիտական ծանոթության մեջ նշված են հոդվածների առաջին հրատարակության տեղը, լեզբը և առաջին հրատարակության մեջ սպրդած մի քանի վրիպակների ուղղում, որ անաստատիկ հրատարակությունը հնարալորություն չի տվել սրբագրելու: Հոդվածներում նկատելի են նաև այլ վրիպակներ, որոնց ընդհանուր ուղղումը հավանաբար կտրվի երկրորդ հատորում:

Հատորի առաջին հինգ հոդվածներում (որոնք «Հետազոտություններ հիս հայերենի շարահյուսության վերաբերյալ» ընդհանուր վերնագրով 1897—1911 թթ. ընթացքում լույս են տեսել Փարիզի լեզվաբանական ընկերության «Տեղեկագրում») Վ. դարի հայ մատենագրությանից, հատկապես Հին և Նոր կտակարաններից ծագված հարուստ փաստերի հիման վրա հեղինակը լուսարանում է հայերենի, հատկապես գրարարի շարահյուսության զանազան հարցեր՝ ցուցականները, ածականի (շատ լատինացումով) համաձայնության կանոնները, հոլովների կիրառությունը, բայերի դիմավոր ձևերի կիրառությունը և գոյականի հոգնակի ձևերի կիրառությունը, ընդամենը 123 էջ: Այս հինգ հոդված-

ները կազմում են մի ամբողջություն և կարող են ընթերցվել որպես մեկ աշխատության հաջորդական զլուխները, ինչպես հատորի նախաբանում գրում և մատենագիտական ծանոթության մեջ դրանք բոլոր այն դասակարգում է պրոֆ. է. Իենմանիստր:

Մեյեն հայերենի մասին սկսել է գրել իր առաջին իսկ հոդվածներում, 1890 թ.: Հնդեվրոպական լեզուներից հայերենը միշտ էլ մնացել է նրա ուսումնասիրությունների նախասիրած ընդգծվածը:

Վերոհիշյալ հոդվածներից առաջինը լույս է տեսել 1897—1898 թթ.: Մինչ այդ հնդինական ձևեր էր բերել հայագիտական և հայ բանասիրական խոր ու կառույց պատրաստություն՝ աշակերտելով Օ. Կարիերին, 1890—1891 թթ. ձմռանը՝ Վիեննայի Մխիթարյաններին (հատկապես Ա. Այտրնյանին և Հ. Տաշյանին): 1891 թ. այցելում է այն ժամանակ Հայաստանի գիտական կենտրոնը՝ Լքմիածին, որտեղ նա նորից էլ լինում 1902 թ., երբ, որպես հայերենի դասախոս Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում փոխարինում էր իր ուսուցիչ հանգուցյալ Օ. Կարիերին: Այն ժամանակ նա արդեն խորիմաց հայագետ լեզվաբան էր (լեզվաբանական գիտության դոկտորի աստիճան է ստացել 24 տարեկան հասակում):

«Ցուցականներ» հոդվածում Մեյեն գրում է, որ դասական հայերենը ժողովրդական լեզու է, հնդեվրոպական այն հին լեզուներից մեկը, որի քերականական ձևերը ներկայացնում են ամենալատարյալ դուրսհանությունը միմյանց միջև: Այդ համաչափության մեջ ուշադրավ են ցուցաբերում, որոնք ութ կամ տասը շարքով անձնական հոլեր (—ս, —դ, —ն), ցուցականներ (այս, այդ, այն), վերաբերականներ (սա, դա, նա), նույնություն ցույց տվող դերանուններ (սոյն, յոյն, նոյն), մակբայներ (ասու, այսու, այսուհն, աստի, աստուտ և այլն, առաջիկ, առանիկ, առաջիկ), ներգաղթած են մեկ աղյուսակում: Դիշտ է, հայերենն այս համակարգի արմատները ժառանգել է հնդեվրոպական մայր լեզվից, սակայն զարգացրել է դրանք:

Ոչ որ ավելի լավ, բան Մեյեն, ցույց չի տվել ս, դ, ն արմատական տարրերի և նրանցից կազմված բուն ձևերի իմաստային այն նրբերանգները, որ նրանք հաղորդում են հին հայերենին՝ ոչ միայն երկաստիություններում, այլև փոխադասական բանավեճերում և ուրիշ շարադրանքներում: Այդ նրբերանգները այնքան են հատուկ հին հայերենին, որ հայ բնագրերի հալ և օտառ թարգմանիչներ իրենց ժամանակակից լեզուների դանադան միջոցներով ձգտել են այս կամ այն չափով արտահայտել դրանք: Շատ լեզուներ, ինչպես լատիներենը,

ոչինչ չունեն հին հայերենի հոլերին համապատասխանող: Լ. Մարիեսը խոստովանում է, որ եթե ինքը կարողացել է ճիշտ հասկանալ և արտահայտել հոլերի արտահայտած նրբերանգները Եզնիկի աղանդակից բանավեճի ֆրանսերեն թարգմանության մեջ դա լեզվաբանության իր ուսուցիչ Մեյեի շնորհիվ է:

Մեյեն ստուգարանում է ցուցականները և ցույց տալիս նրանց կազմավորման եղանակը: Այնուհետև շատ հարուստ փաստական տվյալներով և դրանց գիտական մեկնարանությամբ նա հստակ կերպով լուսարանում է ս, դ, ն արմատների իմաստները՝ միշտ էլ հիշեցնելով, որ արտահայտված նրբիմաստը ամեն դեպքում սերտ հարաբերության մեջ է երեք դեմքերից մեկի հետ: «Հայերենը ոչ մի դեպքում չի կարող կիրառել մի ցուցական՝ առանց միաժամանակ արտահայտելու դիմային այս կամ այն շափով ճշգրիտ գաղափար» (էջ 9):

Հոդվածում բնագրային վկայություններով խոսվում է ցուցականների շարահյուսական կիրառության մասին: Վերջապես, նշվում է, որ գոյականի անորոշությունը կարող է արտահայտվել, ուղիղ խնդրի՝ առանց զ նախդրի կիրառությունից բացի, նաև որոշ բառիկներով մի, ումն, իմն, ինչ, ու իրենց թեր հոլովներով հանդերձ, և բերվում են բազմաթիվ օրինակներ: Հին հայերենում գոյականի՝ հոլով, ցուցականով և այլն, կամ առանց դրանց կիրառությունը հանդում է այն բանին, թե տվյալ գոյականը որոշյալ է, թե անորոշ:

Ցուցականները հոդվածի եզրակացությունը հետևյալն է՝ «Այս համառոտ քննարկումը մեզ ցույց է տալիս, թե հայերենը քանի՞ միջոցներ ունի բառերը որոշելու համար, և նրա հաստատած համակարգը որքան կուտ է և համաչափ: Այդ բոլոր հնարավորությունների ճշգրիտ կիրառությունից է առաջանում հայերեն նախադասության հստակությունը, և դրանք միակերպ ու որոշակիորեն կիրառող հնդինականները, ինչպիսին են Ավետարանի թարգմանիչները, Եզնիկը, Եղիշեն, այդպիսով իրենց ոճին տալիս են կյանք ու արտահայտչականություն, որը նրանց հմայքի մասն է կազմում: Այս տեսակետից թվում է, թե հնդեվրոպական ոչ մի լեզու չի գերազանցում հայերենին կամ նրան հավասարվում: որոշիչ միջոցների ձևերը բերած վարդապետում կարծես փոխհատուցում է այն կուրուստներին, որ լեզուն կրել է այլ դեպքերում»:

Երականները որոշելու տեսակետից ցուցականներին սերտորեն կապված են ածականները (այդ տերմինի տակ Մեյեն նկատի ունի նաև դերանուններն ու թվականները), ուստի «Ածա-

Նկանների համաձայնությամբ կանոնները՝ հոգ-
վածք լրացնում է առաջինին:

«Ածականների» համաձայնության հարցում հին հայերենը ձգտում է ածականի և գոյականի անհամաձայնության, ինչպես ի արդի հայերե-
նում, սակայն նա ղեռ շատ հետքեր է պահպա-
նում հնդեվրոպական վիճակից, որտեղ համա-
ձայնությունը պարտադիր էր քերականական
սեռի և թվի առկայության պատճառով: Հին
հայերենի համաձայնության կանոնները բազ-
մազան են և անկայուն: Մեյլեն հավաստի փաս-
տերով, իստապահանջությամբ շարադրում է
որպես որոշիչ և ստորոգելիական վերադիր
զործածված որական, ստացական, թվական,
հարաբերական «ածականների» համաձայնու-
թյան գլխավոր և մասնակի կանոնները: Ամեն
մի ջանասեր հետազոտող թերևս որոշ հաջողու-
թյամբ կարող էր մեր հին մատենագրության
ընթերցումից բխեցնել դրանք. և իրոք, դրանք
մասամբ (սակայն ոչ Մեյլենի հատուկ ոճով) շա-
րադրված են զրաբարի քերականական ձեռ-
նարկներում. սակայն հոգվածի երկրորդ մասը՝
«Պատմական բացատրության փորձը», Մեյլեն
միայն կարող էր գրել՝ լեզվաբանական իր ծո-
վածավալ գիտության, պատմա-համեմատական
մոտեցմամբ և պատճառի մեջ ներթափանցելու
ձիրքով, որոնցով նա գերազանցորեն օժտված
է եղել: Ուրեմն եթե ուզում ենք հոգվածի երկու
մասերի միջև նախընտրանք կատարել, այս
երկրորդը առավել արժեքավոր է մեզ համար.
այստեղ երևան է ռալիս տրամաբանող, պատ-
մարան, փխրափա Մեյլեն: Նրա եզրակացու-
թյունն է՝ հին հայերենի համաձայնության կա-
նոնները իրենց ամբողջության մեջ միանգա-
մայն բացատրելի են, և եզակի ուղղական-հալ-
ցականից է սկիզբ առել այն դարավոր զար-
դացումը, որ հանդիս է արդի հայերենի վիճա-
կին. նվազ բացատրելի է քերականական սեռի
վերացումը հայերենում. այս, ուստի և ածա-
կանների համաձայնության կանոնների վերաց-
ման հարցում, կարող են դեր խաղացած լինել
հայերենին հարևան հարավային կովկասյան լե-
զուները: 1900 թ. արտահայտված այս մտքերը
Մեյլեն պահպանել է իր զրաբարի քերականու-
թյան առաջին և երկրորդ (1936) հրատարա-
կությունների մեջ:

Լեզվական երևույթների պատճառների մեջ
ներթափանցելու ոգով է գրված նաև «Հնդեվ-
րոպական կիրառությունը» հետազոտությունը, որը
հայերենի հոլովական համակարգի զարգաց-
ման ամփոփումն է. հայերենը քանզի է և միա-
ժամանակ վերակառուցել ընդհանուր հնդեվրո-
պական հին հենքը. թեև նրա շեշտը մեկ վան-
կով կրճատել է հնդեվրոպական հիմքը կամ
բունը, սակայն նա յուրօրինակ ձևով միմյան-

ցից տարբերելով պահպանել է հնդեվրոպական
ուր հոլովներից յոթը՝ ուղղական, հայցական,
սեռական, տրական, բացառական, ներգոյա-
կան և գործիական: Մեյլեն զրաբարի առանձին
հոլով է համարում ներգոյականը, որ ժամա-
նակակից քերականների կողմից մերժվում է
որպես այդպիսին: Այսպիսով՝ հայերենը այն
լեզուներից մեկն է, որտեղ ամենից հեշտ է ու-
սումնասիրել հնդեվրոպական հոլովների կիրա-
ռությունը, քանի որ նա դրանք ներկայացնում
է որպես միմյանցից ղեռ խիստ որոշակի զատ
հոլովներ:

Համառոտ ներածական մասից հետո, ամեն
մի հոլով ուսումնասիրվում է առանձին՝ իր
կիրառություններով, ընդունած նախդիրներով
և այլն. խոսվում է նաև «նա որ» նշանակող
հարաբերական ուղղերանվան հարաբերյալի
զեղչման մասին հնդեվրոպական մյուս լեզու-
ների համադրությամբ: Մեջ բերենք հետազո-
տության եզրակացությունը. «Հայերենը ոչ
միայն պահպանել է հնդեվրոպական համար-
յա բոլոր հոլովները, այլև նրանց մեջ կայուն
կերպով պահպանել է այնպիսի նշանակություն,
որը համարյա ճշտիվ նման է հնդիրանական լե-
զուներում, հունարենում, սլավոններինում և այ-
լուր նրանց ունեցած նշանակությանը: Եվ եթե,
ինչպես մյուս բարբառներում, լեզվի զարգաց-
ման որոշ շրջանում (որ ներկայացված է դա-
սական հայերենով) հոլովները որոշվել են
նախդիրներով, դոնե հակառակ այլուր հաճա-
խագույնս նկատվածի, նախդիրները մեծ դեր
կատարելուց հետո՝ վերջնականապես անհետա-
ցել են ժամանակակից լեզվից, մինչդեռ հոլով-
ները դեռևս ունեն իրենց լրիվ արժեքը. հնդ-
եվրոպական բոլոր կենդանի լեզուներից առա-
վելագույնս հայերենում է նկատելի հոլովների
կիրառությունը, և այս տեսակետից լիտվանե-
րենն անգամ չի կարող հավասարվել նրան»:

«Գոյականների հոլովների ձևերի կիրառու-
թյունը» հոդվածը հին, միջին և ժամանակակից
հայերենի հոլովների ձևերի, հավաքական անուն-
ների և նրանց մասնիկների (—ի, —անի, —տի,
—ոտի, —ուի, —եան) ամենալիակատար ուսում-
նասիրությունն է, որ հեղինակը կատարել է հո-
լովական որոշ վերջավորությունների կամ հո-
լովականացմանների (—ել, —ս) պատմա-համեմա-
տական հետազոտության հետ միատեղ: Նա
խորությամբ վերլուծել է առաջին հայացքից
պարզ թվացող մի հարց՝ գոյականի եզակի կամ
հոլովակի թվով կիրառությունը հին հայերենում:
Հստակությամբ և սպառիչ մանրամասնությամբ
նրա քննությունից են անցել հայերենի բոլոր
անեղական գոյականները իրենց կազմությամբ,
կիրառության տեղով և իրենց գոյության ին-
չու-ի մեկնական տնտղմամբ: Այս բոլորը խր-

տացված է հետևյալ եզրակացություն մեջ. «Ուրեմն հոգնակի ձևերը, ինչպես հոլովածե-վերը, դասական հայերենում պահպանել են հնդեվրոպականում իրենց ունեցած նշանակու-թյունը։ Նրանք կիրառվում են իրենց տրամա-րանական ամբողջ իմաստով. բացի այդ, նը-րանք բախականին հաճախ են կիրառվում բազ-մաթիվ մասերից բաղկացած առարկա նշելու համար։ Վերջապես, նրանց կիշառությունը նույնիսկ րնդարձակվել է, և հոգնակին որոշ չափով դարձել է վերացական անունների մի բնորոշ գիծ. սակայն դեպքերի մեծ մասում հոգ-նակիի իմաստը նշմարելի է։ Դասական հայե-րենում ոչինչ նախատեսել չի տալիս հոգնակիի համակարգի վերացումը, որն իրադրոծվելու վրա էր, քանի որ այն հանդիպում է միջին և արդի հայերենի բոլոր բարբառներում, ուստի այն անմիջապես հաջորդած պետք է լինի հին հայերենի դրավոր կայունացման ժամանակա-շրջանին»։

Դասական հայերենի շարահյուսության ու-սումնասիրությունը թերի կլինեը առանց բայա-կան ձևերի հետազոտության. Մեյլեն չէր կարող անտեսել այն։ «Քալեւրի դիմալոր ձևերի կիշա-ռությունը» հոդվածում հեղինակը սահմանա-փակվում է, ինչպես համեստորեն ինքն է գրում, հնդեվրոպական բարդ բայական վիճակի դիմաց հայերենի ձեռք բերած պարզ համակարգի էա-կան զծերի համառոտ նկարագրությամբ, որոնք մեծ մասամբ չեն բացատրված, կամ այդ արված է անբավարար չափով։ Ինչ որ հնդեվրոպակա-նից է ծագում, անմիջապես երևան է գալիս շարադրանքից, իսկ մնացածի մասին, գրում է հեղինակը, լավագույնն է անտարակույս առ այ-ժմ ոչինչ չպնդել։ Այստեղ նոր լուսարանու-թյամբ և նորը բացատրություններով հետա-զոտվել են բայի դիմալոր ձևերը, սեռը, կեր-պը, եղանակները, ժամանակները, բայական հարադրությունները, բայական նախամասնիկ-ները կամ նախաբայերը, որով ցույց է տրված բայն իր բոլոր մասերով։

Դիմալոր ձևերի մեջ հայերենը հնդեվրոպա-կան երկակիի ոչ մի հետք չի պահպանել. եզակի և հոգնակի վեց ձևերն ինքնին արտահայտում են զեմք ու թիվ, և նրանց մոտ ենթակա դեր-անվան դործածությունը պարտադիր չէ, նույն-իսկ բայադրյալ անդեմ ձևի մոտ, որտեղ նա սեռական հոլովով կդրվեր։ Սակայն նախադաս կամ հտադաս դերանունը հաճախ առկա է բա-յական դիմալոր ձևի մոտ և իր բացակայու-թյամբ կամ առկայությամբ, ինչպես և շարա-դասությամբ արտահայտում է ենթակայի ուժե-ղացում։ Անենթակա հոգնակի երրորդ զեմքը հաճախ անդեմ կամ րնդհանրացման նշանա-կություն ունի։

Մեյլեն հին հայերենում նկատում է բայի եր-կու սեռ՝ ներդործական և միջին-կրավորական, որոնք իրենց վերջավորություններով լավագույնս նկատելի են անցյալ կատարյալում։

Գրեթե չուսումնասիրված լինելու պատճառով՝ մեզ համար շատ ուշադրավ է բայի կերպը, և ոմանց թերևս թվում է, որ այս թերականական կարգը հատուկ չէ հին հայերենի բային։ Տար-համոզվելու համար բավական է կարդալ Մեյլեի հետազոտությունը և Ստանիսլաս Լիտևեի «Հին հայերենի հարակատարը» աշխատությունը (1933)։ Վերջինս, ինչպես գրում է հեղինակը, հիմնված է Մեյլեի ուսումնասիրության վրա։ Մեյլեն երկու անգամ է անդրադարձել կերպի հարցին։ Այստեղ կերպի արտահա տությունը քննված է բոլոր եղանակներում և ժամանակե-րում, և ասված է, որ կատարյալ կերպը լավա-գույնս արտահայտվում է անցյալ զերբայ-լեմ կառուցվածքում, որ ժամանակակից դարարա-դետները հաղիվ թե ներկայացնում են որպես հին հայերենի ուրույն ժամանակ։ Ստանիսլաս Լիտևեն ապացուցել է, որ այս նորակազմության մեջ հայերենը պահպանել է մի հին թերակա-նական կարգ, այնքան հին, որ նրան համապա-տասխանը գտնում ենք հոմերական հունարե-նում։

Եղանակի հարցում, ի թիվս այլ նուրը և նոր տեսակետների, Մեյլեն գտել է, որ հին հայե-րենի ստորադասականը իմաստային նույն նշա-նակություն ունի, ինչ որ հնդեվրոպական րդ-ձականը։ Եվ Մեյլեի աշակերտներից է. Մարինսն րնդունում է, որ եթե ինքը ապացուցել է, որ հանձին ստորադասականի ածանցի պետք է տեսնել հնդեվրոպական րդականի ածանցը, դա Մեյլեի հետազոտության շնորհիվ է։

Այս հատորում հրատարակվել է Մեյլեի մի այլ կարևոր հոդված՝ «Հին հայերենի բառա-բարդման մասին», որն այս հարցի ամենախոր և ամենից րնդարձակ ուսումնասիրությունն է։ Հեղինակը նկատի է առնում բուն բարդությունը, և անտեսում է հարադիրներն ու ծագմամբ հա-րադիր միասնգամ, այնչափ և նման բառերը։ Իսկական բարդ բառերի ուսումնասիրությունը տարվում է երկու դիսալոր ուղղությամբ՝ բարդ բառի երկու եզրերի զոդման ձևը և նրանց եր-կուսի իմաստային հարաբերությունները։ Որպես առաջին եզր, մեծ մասամբ հանդես է գալիս զոյականի ուղիղ կամ ուղղական-հայցական ձևը. սակայն հայերենին խորթ չեն նաև եռ-բար-բուրդի, բեռ-բուրդի, առն-ա-կիմ, բանս-առ-կու, ձերբ-ա-կալ, ալան-ա-տես և նման բարդ բառեր։ Երկու եզրերը միանում են հաճախ –ա- հոդակապով, որը սակայն բացակայում է, երբ բարդ բառի երկրորդ եզրը սկսվում է ձայնա-վորով (այլ-ազգի). երբ առաջին եզրը թվա-

կան անուն է (երկ-դրամեան), երբ -ի--ով կամ -ու--ով առաջին եզր հիմքերը պահպանել են իրենց -ի--ն կամ -ու--ն, որոնք հետագայում բառամիջում բաղաձայնից առաջ սղվել են (բան—բանի—բան-բեր, բան-զես) և այլն։ Սակայն մեզանից ո՞վ չի հետաքրքրվել, թե ի՞նչ ծագում ունի այս -ա--ն։ Մեյնն հավանական է համարում երկու ծագում, նախ՝ կան -ա- հիմքով բառերը, և -ա--ն կարող է բառի հա- կան մասը լինել (մեծա-զին, բազմա-ծին), ու -ը--ով, -ու--ով հիմքերում այն կարող է համարանական լինել։ Իսկ -ո--ով հիմքերում բառավերջի -ո--ն միշտ էլ փոխարինվել է -ա--ով (այլ-ա-կերպ, միջ-ա-զետ)։ Երկրորդ՝ այս -ա- հոդակապը կարող է իրենց զոդման էություն a ունեցող իրանական փոխառյալ բառերի (bari-pan, aspa-tak) ազդեցությամբ արդյունք լինել։ Ո՞նչ էլ լինի, գրում է Մեյնն, մի հոդակապ անհրաժեշտ էր, որն ըստ լեզվի ընդհանուր պայմանների կարող էր լինել միայն -ո--ն կամ -ա--ն։ Լեզուն որոշել է, որ այն լինի -ա-, որ առկա էր բնիկ և փոխառյալ բառերում։

Մեյնն սովորեցնում է, որ հայերենում բարդ բառերի ամենից արտադրողական տիպարները, որ հայերենը զարգացրել է առանց օտար ազդեցության կարիք զգալու, եղել են՝ ստացական բարդ (ան-բան, ողջ-անդամ, բազմ-ուսանի և այլն) և բայանուն երկրորդ եզրով բարդ բառերը (սլող-ա-քեր, խող-արած և այլն)։ Այս երկրորդ տիպարն իր հերթին ամենից արտադրողականն է։ Շատ կարևոր է Մեյնի այն միտքը, որ գոյականական բաղաձայնի վերջածանցներ (-ուր, -աուր, -ա-իից, -ած, -ոտ) ձևերն են բարդ բառերի նախկին երկրորդ եզրերը։

Մեյնի այս վեց հետազոտությունները, որ մենք փորձեցինք շատ համառոտ բնութագրել, կազմում են նրա երրորդ դիրքը հին հայերենի բերականության մասին, այն լրացումն է հեղինակի «Դասական հայերենի համեմատական բերականության ուղղագիծ» և «Հին հայերենի տարրական բերականություն» իրենց խորագրերով համեմատ, սակայն խորությամբ և գիտական ճշտությամբ կոթողային երկու աշխատությունների։

Այս վեց ուսումնասիրությունները գրված են համառոտ, սեղմ, այնպիսի գիտական հակիրճությամբ, որ հատուկ էր Մեյնին։ Մանրակրկիտ առանձին հետազոտություններով կարելի է լուրջ խորացնել նրանց մանրամասները, սակայն դրանք իրենց ամբողջությամբ հայ լեզվաբանության մեջ կմնան որպես հիմնային, խարիսխային։ Հատորի նախաբանում պրոֆ. է. Բենվենիստը ընդգծում է, որ Մեյնի հայագիտական ուսումնասիրությունները նախապատրաստել են հայերենի այս կամ այն հարցի մասնակի և ավելի մանրակրկիտ նկարագրություններ, ինչպիսին են Ս. Լիոնեի «Հին հայերենի հուրակատար» (1933), Հանս Ֆոգտի «Հայերենի բայի անվանական ձևեր» (1937), Լ. Մարիեսի և ուրիշների հայագիտական աշխատությունները։ Ավելացնենք, որ անցած շուրջ 75 տարիների ընթացքում չեն հնադել Մեյնի հայերենագիտական հետազոտությունները, այդ թվում և այս հատորում հրատարակված հոգվածները։ Այսօր էլ հայագետները սիրով և վստահությամբ դիմում են Մեյնի աշխատություններին։

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ